ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
0010, ՀՀ, ք.Երևան, Զաքիյան 7-2 | (+374 10) 600 701, 600 704 | (+374 10) 600 703 | info@advocates.am | www.advocates.am

05 մայիսի 2018թ.

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար՝

պարոն Դավիթ Հարությունյանին

ՀՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար՝

պարոն Էդվարդ Նալբանդյանին

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Հարգելի՛ պարոն Նալբանդյան,

2018 թվականի հունվարի 24-ին Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (այսուհետ՝ **Վեհաժողով**) ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընդունել է մի հանձնարարական[1], որը կոչ է անում Նախարարների կոմիտեին մշակել և ընդունել **Փաստաբանի մասնագիտության վերաբերյալ եվրոպական կոնվենցիա**, որը կներառի արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ: Մասնավորապես, Վեհաժողովը առաջարկում է ստեղծել վաղ ահազանգման մեխանիզմ փաստաբանների անվտանգության և անկախության և իրենց մասնագիտական գործառույթները արդյունավետորեն կատարելու նկատմամբ անմիջական սպառնալիքներին անմիջապես արձագանքելու համար, լրագրողների պաշտպանության և լրագրողների անվտանգության Եվրոպայի խորհրդի Պլատֆորմի մոդելի հիման վրա:

Այդ առաջարկությունը ստացել է ոչ միայն ՀՀ փաստաբանների պալատի, այլ նաև Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի ԵՓԻՄԽ/CCBE աջակցությունը, որը ներկայացնում է 45 երկրների փաստաբանների միություններ, ավելի քան մեկ միլիոն եվրոպացի փաստաբանների:

Փաստաբանական միավորումներս կարծում ենք, որ Փաստաբանի մասնագիտության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի անհրաժեշտությունը բացատրվում է երեք հիմնական պատճառներով.

[1] http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=24466&lang=en

Նախևառաջ, փաստաբանները, որպես արդարադատության համակարգի կարևոր դերակատարներ նպաստում են իրավունքի գերակայության պաշտպանությանը՝ ապահովելով արդարադատության մատչելիությունը իրենց քաղաքացիների համար և պաշտպանելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Այդ է պատճառը, որ փաստաբանի մասնագիտությունը կարող է էական ճնշման ենթարկվել գործադիր և օրենսդիր մարմինների, իսկ երբեմն նաև դատական իշխանության կողմից, ինչպես նաև ոչ պետական դերակատարների կողմից:

Երկրորդ, թեև կան տարբեր գործիքներ որոնք երաշխավորում են փաստաբանների դերի պաշտպանությունը, որոնցից է՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. №Rec(2000)21 հանձնարարականը, այնուամենայնիվ դրան հաջորդող 17 տարվա ընթացքում փաստաբանների դերի նկատմամբ կատարվող շարունակական հարձակումները ցույց են տալիս, որ վերջինիս արդյունավետությունը ցածր է: Այսպիսով, միայն վերջին երեք տարիներին CCBE-ն մեծ ուշադրությամբ հետևում է այն գործերին, որոնք վերաբերում են փաստաբանների դեմ հարձակումներին կամ սահմանափակում են փաստաբանների իրավունքները: Մասնավորապես, CCBE-ի կողմից ուղարկվել են նամակներ, որոնք վերաբերում են հետևյալ երկրներում տիրող իրավիճակին՝ Բոսնիա եւ Հերցեգովինա[2] , Վրաստան [3], Մոլդովա[4], Ուկրաինա[5] , Թուրքիա[6] և Լեհաստան[7]: Լավագույն փորձին հետևելու հորդորների փոխարեն անհրաժեշտություն է առաջանում սահմանել պարտադիր կատարման ենթակա վարքագծի կանոններ, որոնք կնպաստեն փաստաբանի մասնագիտության անկախության և օրենքի գերակայության ապահովմանը:

Երրորդ, չնայած, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) պաշտպանում է տարբեր հիմնարար իրավունքներ, կապված փաստաբանների դերի հետ՝ օրենքի գերակայության ապահովման գործում, ինչը պետք է շարունակական լինի, այնուամենայնիվ Հանձնարարականում տեղ գտած մի շարք այլ իրավունքներ ՄԻԵԿ-ի կիրառման շրջանակներից դուրս են: Այդ իրավունքները նույնպես եվրոպական մակարդակով պաշտպանության մեխանիզմի կարիք ունեն, բայց ավելի հեշտ, ավելի արագ և անմիջական քան ՄԻԵԿ-ը:

---

[2] Bosnie-Herzégovine – violences à l'encontre des avocats : CCBE letter of March 2015, CCBE Letter of February 2017, and protection of the legal profession see CCBE letter of March 2017

[3] **Géorgie - violences à l'encontre des avocats/violations des droits des avocats CCBE letter of May 2015, CCBE letter of April 2017 ; droit à un procès équitable CCBE letter of February 2017**

[4] Moldavie CCBE letter of April 2015 (representation in court proceedings), CCBE letter of January 2017 (violation of lawyers' rights)

[5] Ukraine CCBE letter of March 2016 (rights of audience), April 2016 (murder of lawyers), CCBE letter of April 2016 (violation of lawyers' rights), CCBE letter of February 2017 (administrative detention of lawyer), CCBE letter of March 2017 (murder of lawyers)

[6] Déclaration commune des avocats, des juges et des journalistes sur la répression continue de l'état de droit en Turquie, le 5 avril 2017 ; communiqué de presse sur la répression continue de l'état de droit en Turquie, le 12 décembre 2016 ; diverses lettres de soutien envers les avocats arrêtés, voir le site du CCBE http://www.ccbe.eu/fileadmin/speciality_distribution/public/documents/HUMAN_RIGHTS/HR_Position_papers/FR_-HR_20170405_Joint-Statement-Turkey.pdf

[7] Pologne CCBE letter of July 2017 on adopted amendments to the Polish Act on the National Council of the Judiciary and the Act – Law on Common Courts Organisation

2017 թվականի դեկտեմբերի 12-ին Վեհաժողովի մարդու իրավունքների և իրավական հարցերի հանձնաժողովի կողմից միաձայն ընդունված զեկույցը[8] ընդգծվում է փաստաբանների վճռորոշ դերը մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և օրենքի գերակայության երաշխավորման հարցում և խորը մտահոգություն է հայտնում այն փաստին, որ Եվրոպայի խորհրդի շատ անդամ պետություններում փաստաբանները շարունակում են ենթարկվել ոտնձգությունների, սպառնալիքների և հարձակումների, որոնք որոշ անդամ պետություններում նույնիսկ աճ են գրանցում: Զեկուցող Սաբիեն Լահա-Բաթթուն, այսպիսով, ընդգծել է այս ոլորտում պարտադիր կատարման ենթակա գործիքակազմի անհրաժեշտության մասին՝ ինչը կապահովվի կոնվենցիայի ընդունմամբ, որը պետք է բխի Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. №Rec(2000)21 հանձնարարականից, հաշվի առնելով իրավական դաշտում առկա չափանիշները և հետագա զարգացումները:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր տրամադրության տակ կունենա 6 ամիս ժամանակ պատասխանելու համար Վեհաժողովի հանձնարարականին Որոշում կայացնելուց առաջ, Նախարարների կոմիտեն փետրվարի 7-ին դիմել է Մարդու իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեին (CCDH), Իրավական համագործակցության հարցերով Եվրոպական կոմիտեին (CDCJ), Հանցավորության հիմնախնդիրների մասին եվրոպական կոմիտեին (CDPC) և Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովին (CEPEJ) առաջարկություններ ներկայացնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում ենք աջակցել այս հավակնոտ նախաձեռնությանը, որի ընդունումը կդառնա մեծ առաջընթաց մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման հարցում:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

[8] http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=24296&lang=en